



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**9 օգոստոսի 2013 թվականի N Մ-667-Ա
քաղ. երևան**

**ԱՄՆ-Ի ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՐՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑ-
ՎՈՂ «ՄԱՐՈՂԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» ԾՐԱԳՐԻ
Մ Ա Ս Ի Ն**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 3/3.8-2/10835-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի հուլիսի 26-ի N ՋԲ/ԱՆՄ-3/5587-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի հուլիսի 29-ի N ԴԴ/22/8444-13, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2013 թվականի հուլիսի 29-ի N 03/07/8471-13, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2013 թվականի հուլիսի 29-ի N 01/3.1/2632-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հուլիսի 30-ի N ՎԱ/3-4/8958-13 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակելի ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից (ԱՄՆ, Գլենդել, Փասիֆիք պողոտա, N 1101) իր հայաստանյան ներկայացուցչության միջոցով (<< քաղ. երևան, Ալեք Մանուկյան 9, սենյակ 204, ՀՎՀՀ՝ 01574053) իրականացվող՝ 389,851.03 ԱՄՆ-ի դոլարի համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Մարդասիրական օգնություն Հայաստանին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից՝ իր հայաստանյան ներկայացուցչության հասցեով ուղարկված բեռը (79 տեղ, 8,538 կգ ընդհանուր քաշով, 380,201.03 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 8,150 ԱՄՆ-ի դոլար, «Արարտյան» ՏՄ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:


3. ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԿ 

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչության տնօրեն Արմեն Գյուլխասյանի կողմից



«18» հուլիսի 2013


Մարդասիրական օգնություն Հայաստանին

Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից դոնորներից ստացված մարդասիրական օգնության հավաքագրում, առաքում Հայաստան, ստացում և համապատասխան ձևակերպումների իրականացում ու բաշխում շահառու կազմակերպություններին: Մարդասիրական օգնության նպատակներն ըստ կազմակերպությունների նկարագրված են կից ներկայացված շահառուների բաշխման ցանկում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված պրոտնություններ
3.	Բարեգործը	ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամ (1101 Ն. Փասիֆիք պողոտա, Գլենդեյլ, Կալիֆորնիա 91202) և ըստ կից ցանկի
4.	Ծրագիրը կատարողը	ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամը հայաստանյան ներկայացուցչության միջոցով (քաղ. Երևան, Ալեք Մանուկյան 9, սենյակ 204, ՀՎՀՀ՝ 01574053):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն և ԼՂՀ սոցիալական, կրթության, մշակույթի, առողջապահության ոլորտներ:
6.	Ծրագրի բյուջեն	389,851.03 ԱՄՆ դոլար
7.	Բարեգործություն ստացողը	Ստացող կազմակերպությունների ցանկը ներկայացվում է կից հավելվածով:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2013 թվականի հուլիսի 18-ից մինչև 2013 թվականի հոկտեմբերի 30-ը

10/10.1

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Բեռների ստացում, մաքսային ձևակերպում և բաշխում շահառու կազմակերպություններին 2013 թվականի հուլիսի 18-ից մինչև 2013 թվականի հոկտեմբերի 30-ը 389,851.03 ԱՄՆ դոլար
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ներմուծվող ապրանքների ցանկը ներկայացվում է կից հավելվածով՝ 8,538 կիլոգրամ բեռ 380,201.03 ԱՄՆ դոլար արժեքով Տեղափոխում՝ 8,150.00 ԱՄՆ դոլար
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	մաքսային պահեստի ծախսեր՝ 1,500.00 ԱՄՆ դոլար,
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության եկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Պարբերաբար հաշվետվություններ են ներկայացվելու ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամին և՛ օրենքով սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:




10/10.1

Ստացող
Միացյալ հայկական եիմադրամի հայաստանյան ներկայացուցչություն
Լկեր Մառուկան 9, 204 սենյակ
Երևան, 0070 Հայաստան
Հեռ. 010-51-20-50
Բջջ. 091-42-51-21
Պատասխանատու՝ Արմեն Գյուլխայան

Ներուծվող ապրանքների և ստացող կազմակերպությունների ցանկը

Կոնտեյներ 342



ԴՈՆՈՐ	ՍՏԱՑՈՂ	Ստացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ	Քեռիերի հատկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը:	Քեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն սրամադրել վերջինիս	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	ԿՈՂ	ԱՐԿՂ	ՊԱԼԵՏ	ՔԱՇ ԿԳ	ԱՐԺԵՔ ԱՄՆ ԴՈԼԱՐ
Հայ օգնության ֆոնդ			Քեռի կհատկացվի Գյումրու Շիշյանի անվան Օկտես երաժշտական դպրոցի սաներին:	Գյումրու Շիշյանի անվան Օկտես երաժշտական դպրոցի սաներին, բարեգործ ծրագրի շրջանակում:	Երաժշտական գործիքներ	SC 342-03	10		165.6	20,496.00
			ՀՕՖ-ի կողմից իրականացվող «Արցախի հարթման հարթակումը Տավուշի մարզում» ծրագրի Քեռի քաղաքում գործող գրասենյակում շահագործելու նպատակով:	Բարեգործական ծրագրի շրջանակում:	Համակարգիչներ	SC 342-04	11		156.9	6,707.00
			Գրքերը կհատկացվեն ՀՕՖ-ի կողմից իրականացվող շարունակական բժշկական կրթություն ծրագրի շահառուներին: Գրքերից մեկ արկղը իրենց ներկայացնում է ՀՕՖ-ի տարեկան տեղեկագրերը: Դրանք կբաշխվեն ՀՕՖ-ի շահառուներին և տեղական այլ մարիմենների ՀՕՖ-ի գործունեության իրազեկման նպատակով:	Գիտաբժշկական գրադարան, Շարունակական բժշկական կրթություն ծրագրի շահառուներ, և այլն	Գրքեր	SC 342-13	2	22.2	1,120.00	
Միացյալ հայկական հիմնադրամ	Սարգսյան Բագրատ - ՀՕՖ	Ամերիկայի հայ օգնության ֆոնդ, Հայաստանի մասնաճյուղ Հասցեն՝ ք. Երևան 0010, Խորենացի 22 ՀՎՀՀ - 02517115	Հիգիենիկ պարագաները կբաշխվեն ՀՕՖ-ի շահառու մանկատների, հատուկ դպրոցների ծերանոցների և երեխաների խնամքի և պաշտպանության կենտրոնների շահառուներին:	ՀՕՖ-ի մանկատներում և հատուկ դպրոցներում իրականացվող ծրագրերի շրջանակում:	Հիգիենիկ պարագաներ	SC 342-06	1	420.0	2,622.13	

10/10/1

ԴՈՆՈՐ	ՍՏԱՑՈՂ	Ստացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ	Քեռիերի հատկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը:	Քեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն սրամադրել վերջինիս	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	ԿՈՂ	ԱՐԿՂ	ՊԱԼԵՏ	ՔԱՇ ԿԳ	ԱՐԺԵՔ ԱՄՆ ԴՈԼԱՐ
Ամերիկայի Հայ Ավետարանական Ընկերակցություն	Ներսեսյան Հարություն - Ամերիկայի Հայ Ավետարանական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ	Ամերիկայի Հայ Ավետարանական Ընկերակցության Հայաստանի մասնաճյուղ Հասցեն՝ ք. Երևան, Նիկոլ Դուման 22 ՀՎՀՀ 00032803	Այդ ապրանքատեսակը բաշխվելու է մինչև 2 տարեկան անապահով ընտանիքների երեխաներին՝ Կաթ հայ մանուկներին՝ ծրագրի շրջանակներում, որը գործում է 1991 թվականից:	Տրամադրվելու է բարեգործական նպատակներով:	Մանկական սնունդ	SC 342-01		12	4,250.2	27,720.00
Հայկական ակնաբուժության նախագիծ	Եղիազարյան Նունե - Հայկական ակնաբուժության նախագիծ	Հայկական ակնաբուժության նախագիծ, գտնվելու վայրը՝ Երևան, Ալեգստան 5 ող փ., տ. 7 իրավաբանական հասցեն՝ Երևան, Վրացական 9, բն. 44-2422, 00074765	Հայկական ակնաբուժության նախագիծ՝ «Բ2-ի Armenian EyeCare Project հիմնադիր կազմակերպությունից կամ նրա ակնունից լույս հայի աչքերին ծրագրի իրականացման համար (ՀՀ ՎՔՉՀՀ որոշում՝ Մ-278Ա, 13/04/2012)»:	Դեղորայք կօգտագործվի ՀԱՆ-ի աշխատանքների ընթացքում՝ Աչքի շարժական հիվանդանոցում /ԱՇՀ/, ինչպես նաև կտրվի ՀԱՆ-ի գործընկերներին՝ մասնավորապես Մաղաթանի անվան ակնաբուժական կենտրոնին /ՄԱԿ/ և Քանաթե-Ձեթուն ԲԿ ին՝ ՀԱՆ-ի կողմից վերապատրաստված մասնագետների կողմից օգտագործման համար: Դեղորայքի տրամադրվելիք քանակությունները նախօրոք ձևավել են վերոհիշյալ հաստատությունների ղեկավարության և մասնագետների հետ:	Դեղեր	SC 342-05	1		3.2	2,700.00

10/10/1

ԴՈՒՈՐ	ՍՏԱՅՈՂ	Մտացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ	Քեռների հատկացման նպատակը և դրա եետագա օգտագործման կարգը:	Քեռի ստացման իրական շահառու և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	ԿՈՂ	ԱՐԿՂ	ՊԱԼԵՏ	ՔԱՇ ԿԳ	ԱՐԺԵՔ ԱՄՆ ԴՈՒԱՐ
Արևելյան թեմ	Հարությունյան Ա. - Մեծ Ներսես բարեգործական կազմակերպություն	<Մեծ Ներսես> Բարեգործական Հասարակական Կազմակերպություն, Երևան Կոթլուկի 6 ^ա բն.1, ՀՎՀՀ 01513853	Նպատակը՝ անհատույց փոխանցել հանրային, ակադեմիական, համալսարանական, Հայաստանի ազգային գրադարան, մատենադարան անվճար ծառայություններ մատուցելու, ընթերցողների տեղեկատվական պահանջները բավարարելու համար	Քեռի ստացման իրական շահառու և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս	Գրքեր	SC 342-09	22		396.4	4,650.00
Միացյալ հայկական հիմնադրամ	Դումանյան Դերենիկ- Առողջապահության նախարարություն	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության <<Մարտավիրական օգնության հանրապետական կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպություն, Գտնվելու վայրը - ք. Երևան, Նոր-Արեշ 35 Իրավաբանական հասցեն - ք. Երևան, Նոր-Արեշ 35 ՀՎՀՀ - 02508003	ըստ ՀՀ կառավարության թիվ 1432 Ն, առ 14.10.2004թ. որոշմամբ հաստատված կարգի:	ըստ ՀՀ կառավարության թիվ 1432-Ն, առ 14.10.2004թ. որոշմամբ հաստատված կարգի:	Սիկլոպրին	SC 342-19	1		1.4	26,626.40
					Բժշկական պարագաներ	SC 342-07		8	1,387.1	37,747.59
					Դեղեր	SC 342-10	2		8.2	26,596.00
					Դեղեր	SC 342-14	2	359.3	149,916.72	
Դեղեր	SC 342-16	1	142.4	52,627.94						
Միացյալ հայկական հիմնադրամ	Ավետիսյան Կ. - ԼՂԼ ներկայացուցչությունը Հայաստանում	ՀՀ-ում ԼՂԼ Մշտական Ներկայացուցչություն, Երևան, Ն. Ջաղրյան 17ա, ՀՎՀՀ 01538293	Քարեգործական, ուղղարկվում է ԼՂԼ սոցիալական ապահովության նախարարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, ինչից հետո հանձնաժողովը բաշխում է բեռը շահառուներին	Քարեգործական, ուղղարկվում է ԼՂԼ սոցիալական ապահովության նախարարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, ինչից հետո հանձնաժողովը բաշխում է բեռը շահառուներին	Դեղեր	SC NKR 342-11	1		2.3	6,075.00
					Դեղեր	SC NKR 342-17	1	10.8	266.25	

10/10.1

ԴՈՒՈՐ	ՍՏԱՅՈՂ	Մտացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ	Քեռների հատկացման նպատակը և դրա եետագա օգտագործման կարգը:	Քեռի ստացման իրական շահառու և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս	ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	ԿՈՂ	ԱՐԿՂ	ՊԱԼԵՏ	ՔԱՇ ԿԳ	ԱՐԺԵՔ ԱՄՆ ԴՈՒԱՐ
Օտտավաի հիվանդանոց	Մկրչյան Խ. - Եղեգնաղզորի Բժշկական կենտրոն	Եղեգնաղզորի Բժշկական կենտրոն ՓԲԸ, Եղեգնաղզոր, Կաթիկ 1 ՀՎՀՀ 08909438	Էխոկարդիոգրամ մեքենան նախատեսված է Եղեգնաղզորի Բժշկական կենտրոնում օգտագործելու նպատակով	Էխոկարդիոգրամ մեքենանի տրամադրման նպատակն է բարեգործական հետազոտություններ կատարել Եղեգնաղզորի Բժշկական կենտրոնում	Էխոկարդիոգրամ մեքենա	SC 342-12		1	289.4	1,000.00
Հայաստանի Ամերիկյան Համալսարան	Օրդյան Անահիտ - ՀԱՀ	Հայաստանի ամերիկյան համալսարան հիմնադրամ, Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղդասյան պող.40, ՀՎՀՀ 01511187	ՀԱՀ-ի գրադարանի ֆոնդի համալրում ուսումնական պրոցեսի աջակցության նպատակով	Համալսարանի աշխատակիցները, ուսանողները, դասախոսները	ամսագրեր	SC 342-15	1		4.1	80.00
ARPA Ինստիտուտ	Կալաբյան Զ. - Գիտությունների ազգային ակադեմիա	ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ ՊՈԱԿ Հաստատություն 7, ՀՎՀՀ 00008732	Գիտական աշխատանքներ իրականացնելու նպատակով	Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի Բջջային կենսաբանության լաբորատորիա, սարքն օգտագործվելու է որոշակի փորձանմուշներում ԴՆԹ-ի հատրոպականությունը որոշելու համար	Բժշկական սարքավորում	SC 342-18	1		7.3	2,000.00
Ալեքս և Մարի Մանուկյան թանգարան	Հասմիկ Դողոսյան - Մշակույթի նախարարություն	ՀՀ Մշակույթի նախարարություն ՀՎՀՀ- 02508054 ք. Երևան Կառավարական տուն	Քեռների հատկացումը կրում է բարեգործական բնույթ՝ նախատեսվում է իրականացնել նվիրատվություն	Քեռի ստացման իրական շահառուներն են գրադարանները, թանգարանները, ԲՈԻԶ-երը՝ հայ ընթերցասերների գրքերի հասանելիությունը անվճար ապահովելու նպատակով:	Գրքեր	SC 342-20		1	910.7	11,250.00
ԸՆԴԱՄԱՆԵՂ							53	26	8,537.5	380,201.03

10/10.1



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 օգոստոսի 2013 թվականի N Մ-668-Ա
քաղ. երևան

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԱՆՐԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՈՒ ՆԵՐՄՈՒԾ-
ՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հուլիսի 30-ի N 3/3.8-2/11055-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի օգոստոսի N ՍԲ/22/8673-13, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2013 թվականի օգոստոսի N 1/06/807-13, ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի օգոստոսի N ՎՄ/3-4/9169-12 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնությունից՝ անհատ բարերար Արմեն Ոսկանյանի կողմից որպես օժանդակություն «Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված կենսաբանական ակտիվ հավելումների և դեղորայքի (11 տեղ, 124.5 կգ ընդհանուր քաշով, 206,730 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 175,000 դրամ, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի ծանրամարտի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԿ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**9 օգոստոսի 2013 թվականի N Մ-669-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՊԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-954-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-
ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հուլիսի 30-ի N 3/3.8-2/11017-13 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հուլիսի 31-ի N ՎՄ/3-4/9035-13 եզրակացությունները, որոշում է.


1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված՝ ստորև նշված ապրանքները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն» ծրագրի մասին» N Մ-954-Ա որոշմամբ (2012 թվականի ապրիլի 27-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում՝

- 1) ֆոտոստուդիայի արքեստուարներ և ամրակային դետալներ՝ 5 տեղ, 63 կգ ընդհանուր քաշով, 1,079.92 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 128.8 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ.
- 2) խաղային անլար սենսորային կոնտրոլեր՝ 1 տեղ, 2.7 կգ ընդհանուր քաշով, 317.81 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման կազմել են 28.6 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» ՄՏ.
- 3) մետաղական դռների հավաքածու՝ մեկ տեղ, 340 կգ ընդհանուր քաշով, 7,806.80 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,240 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**9 օգոստոսի 2013 թվականի N Մ-670-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-
ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հուլիսի 29-ի N 3/3.8-2/10917-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հուլիսի 30-ի N ՎՄ/3-6/9009-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից ձեռք բերված՝ ստորև նշված ապրանքները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա և սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում՝


1) այլումինե պրոֆիլների տեսականի՝ 23 տեղ, 15,655.27 կգ ընդհանուր քաշով, 101,798.7 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 8,891 եվրո, «ՄՃՓ» ՏՄ.

2) այլումինե պրոֆիլներ և աքսեսուարների տեսականի՝ 48 տեղ, 8,429.02 կգ ընդհանուր քաշով, 98,836.79 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 6,445.5, «ՄՃՓ» ՏՄ:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 օգոստոսի 2013 թվականի N Մ-671-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 19-Ի N Մ-176-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2013 թվականի հուլիսի 25-ի N 3/3.8-110755/-13 և Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հուլիսի 24-ի N ՎՄ/3-4/8761-13
եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**


1. Սահմանել, որ «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնա-
ճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 01555988) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված
գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության
բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի
«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից իրականաց-
վող ծրագրի մասին» N Մ-176-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի նոյեմբերի 30-ի
N Մ-946-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի
զգալի նշանակություն՝

«ՖԻԼ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02506815) 2013 թվականի հուլիսի 16-ին կնքված
պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գիպսակարտոնի և մետաղական
պրոֆիլների ձեռքբերում՝ 9,514,200 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար-
ություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**9 օգոստոսի 2013 թվականի N Մ-672-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 19-Ի N Մ-176-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N 1)**

(«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հուլիսի 23-ի N 3/3.8-1/10616-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հուլիսի 23-ի N ՎՄ/3-4/8706-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.***

1. Սահմանել, որ «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 01555988) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-176-Ա որոշմամբ հաստատված (2012 թվականի նոյեմբերի 30-ի N Մ-946-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2013 թվականի հուլիսի 11-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում են փայտյա դռների պատրաստման և տեղադրման աշխատանքներ՝ 5,765,400 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 օգոստոսի 2013 թվականի N Մ-673-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱ-
ԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-954-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2013 թվականի հուլիսի 23-ի N 3/3.8-1/10541-13 և Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հուլիսի 22-ի N ՎՄ/3-4/8662-13
եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**


1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-
ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Սիմոնյան» կրթական հիմնա-
դրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական
կենտրոն» ծրագրի մասին» N Մ-954-Ա որոշմամբ (2012 թվականի ապրիլի 27-ի N Մ-302-Ա
որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի
զգալի նշանակություն՝

«ՄՄՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02214638) 2013 թվականի հուլիսի 2-ին կնքված պայմա-
նագրում նշված գործարքը, որով նախատեսվում է էքստրա տեսակի ապակու ձեռքբերում՝
127,700 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**9 օգոստոսի 2013 թվականի N Մ-674-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱ-
ԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-954-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N 1)
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2013 թվականի հուլիսի 24-ի N 3/3.8-1/10738-13 և Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հուլիսի 24-ի N ՎՄ/3-4/8764-13
եզրակացությունները, որոշում է.*


1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-կարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Սիմոնյան» կրթական հիմնա-դրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն» ծրագրի մասին» N Մ-954-Ա որոշմամբ (2012 թվականի ապրիլի 27-ի N Մ-302-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արդի Կարասի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02239413) 2013 թվականի հուլիսի 17-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վեց հեռուստացույցի շրջանակների ձեռքբերում՝ 250,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-մուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 օգոստոսի 2013 թվականի N Մ-675-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱ-
ԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-954-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ (N 2)
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2013 թվականի հուլիսի 25-ի N 3/3.8-1/10756-13 և Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հուլիսի 24-ի N ՎՄ/3-4/8760-13
եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-
ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Սիմոնյան» կրթական հիմնա-
դրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական
կենտրոն» ծրագրի մասին» N Մ-954-Ա որոշմամբ (2012 թվականի ապրիլի 27-ի N Մ-302-Ա
որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի
զգալի նշանակություն՝

«Սոլիդ Մակերես» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00865263) 2013 թվականի հուլիսի 16-ին
կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է գրասեղանների
ձեռքբերում՝ 748,800 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**9 օգոստոսի 2013 թվականի N Մ-676-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 22-Ի N Մ-565-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**


*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2013 թվականի հուլիսի 25-ի N 3/3.8-1/10847-13 և Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հուլիսի 29-ի N ՎՄ/3-4/8937-13
եզրակացությունները, որոշում է.*

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ-
ված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 22-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի
կողմից իրականացվող «Հովհաննես Թումանյանի անվան զբոսայգու վերանորոգման,
վերակառուցման և պահպանման» ծրագրի մասին» N Մ-565-Ա որոշմամբ (2012 թվականի
հունիսի 8-ի N Մ-407-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման
հետև և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01831375) 2013 թվականի հուլիսի 12-ին կնքված
պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բույսերի ձեռքբերում՝
188,333 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար-
ություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտեի:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**9 օգոստոսի 2013 թվականի N Մ-677-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2013 թվականի հուլիսի 29-ի N 3/3.8-1/10928-13 և Հայաստանի Հանրապետության կառա-
վարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հուլիսի 31-ի N ՎՄ/3-
4/9068-13 եզրակացությունները, որոշում է:*


1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսու-
թյունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականա-
ցում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Աթրոնգ Աթոռն Գրուպ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 06609918) հետ 2013 թվականի մայիսի 17-ին կնքված՝ N 13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդիսությունների դահլիճին կից շատրվանի կառուցման աշխատանքներ՝ 46,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Աթրոնգ Աթոռն Գրուպ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 06609918) հետ 2013 թվականի մայիսի 30-ին կնքված՝ N 12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է քարե դետալների պատրաստման աշխատանքների իրականացում՝ 70,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Ա. Ա. Բ. Պրոեկտ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00250339) հետ 2013 թվականի մայիսի 10-ին կնքված՝ N 10 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է քարե դետալների պատրաստման աշխատանքների իրականացում՝ 40,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**9 օգոստոսի 2013 թվականի N Մ-678-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N Մ-094-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**


*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2013 թվականի օգոստոսի 1-ի N 3/3.8-1/11182-13 և Հայաստանի Հանրապետության կառա-
վարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի օգոստոսի 2-ի N ՎՄ/3-
4/9170-13 եզրակացությունները, որ ո շ ու մ է.*

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի փետրվարի 15-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Վանաձորի նոր կառուցվող բժշկական կենտրոնի ծննդատան մասնաշենքի կառուցման» ծրագրի մասին» N Մ-094-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ֆիլիշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07905342) 2013 թվականի հուլիսի 15-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մասնաշենքի կառուցման երկաթբետոնե հիմնակմախքի կառուցման աշխատանքների իրականացում՝ 42,595,840 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**9 օգոստոսի 2013 թվականի N Մ-679-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱ-
ԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N Մ-128-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՈՒ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ
ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2013 թվականի հուլիսի 30-ի N 3/3.8-1/11016-13 և Հայաստանի Հանրապետության կառավարու-
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի օգոստոսի 1-ի N ՎՄ/3-4/9107-13
եզրակացությունները, որ ո ղ ու մ է.*


1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մարտի 11-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ստեփա- նակերտ քաղաքի Բաղրամյան փողոցի վրա գտնվող հանրապետական հիվանդանոցի նոր մասնաշենքի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-128-Ա որոշմամբ (2013 թվա- կանի փետրվարի 15-ի N Մ-097-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

- 1) ծրագրի 8-րդ կետում «2012 թվականի հունվար» բառերը փոխարինել «2013 թվա- կանի հոկտեմբեր» բառերով.
- 2) ծրագրի 9-րդ կետում նախատեսված բոլոր միջոցառումների իրականացման վերջնաժամկետ սահմանել մինչև 2013 թվականի հոկտեմբերի 30-ը:

2. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապ- ված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ ու դրա համար ունի զգալի նշանակություն՝

2
«Մարտին և որդիներ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00931173) 2013 թվականի հունիսի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է այլուրից կոմպոզիտ պանելապատման աշխատանքների իրականացում՝ 18,282,400 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշման համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա- րության և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկա- մուտների կոմիտե:



ՆԱԽԱԳԱԾ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 օգոստոսի 2013 թվականի N Մ-680-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄ-
ԲԵՐԻ 30-Ի N Մ-946-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն


(«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հուլիսի 29-ի N 3/3.8-1/10924-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հուլիսի 31-ի N ՎՄ/3-4/9064-13 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի 2013 թվականի հուլիսի 23-ի գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի N Մ-176-Ա որոշմամբ հաստատված ծրագրում փոփոխություններ կատարելու և նույն ծրագրին հարակից գործարքների մասին» N Մ-946-Ա որոշման (2013 թվականի հունվարի 25-ի N Մ-049-Ա, 2013 թվականի մարտի 15-ի N Մ-148-Ա և 2013 թվականի հունիսի 7-ի N Մ-402-Ա որոշումների խմբագրությամբ) 2-րդ կետի 5-րդ ենթակետում «93405450 դրամի չափով» բառերը փոխարինել «172,697,293 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**9 օգոստոսի 2013 թվականի N Մ-681-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ
26-Ի N Մ-275-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հուլիսի 29-ի N 3/3.8-1/10923-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հուլիսի 31-ի N ՎՄ/3-4/9036-13 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի 2013 թվականի հուլիսի 24-ի գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի ապրիլի 26-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի N Մ-176-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)» N Մ-275-Ա որոշման 1-ին կետում «21344000 դրամի չափով» բառերը փոխարինել «8,588,000 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**9 օգոստոսի 2013 թվականի N Մ-682-Ա
քաղ. երևան**


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ
17-Ի N Մ-326-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հուլիսի 24-ի N 3/3.8-1/10741-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հուլիսի 24-ի N ՎՄ/3-4/8765-13 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի 2013 թվականի հուլիսի 16-ի գրությունը, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մայիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 19-ի N Մ-176-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին N 1» N Մ-326-Ա որոշման 1-րդ կետում «5000000 դրամի չափով» բառերը փոխարինել «10,000,000 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԿ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**9 օգոստոսի 2013 թվականի N Մ- 683 -Ա
քաղ. Երևան**

**«ՎՈՐԼՂ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԸ», ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱԾՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱ-
ԿԱՆԱՅՎՈՂ «9 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՌՆԱՐԿԻ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ
ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 3/3.8-1/10845-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի հուլիսի 29-ի N 02/4346-13, Հայաստանի կրթության և գիտության նախարարության 2013 թվականի հուլիսի 29-ի N 03/07/8466-13 և Հայաստանի Հանրապետության կառավարության աղընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հուլիսի 30-ի N ՎՄ/3-4/8951-13 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 4,582,500 դրամ ընդհանուր արժողությամբ «9 տարեկան երեխաների համար նախատեսված քրիստոնեական ուսուցման ձեռնարկի տպագրություն» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Անտարես» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02519531) 2013 թվականի հուլիսի 10-ին կնքված N WVA/CC/PR-13/001/FY 13 ծառայությունների մատուցման պայմանագրում նշված գործարքը,

որով նախատեսվում է քրիստոնեական ուսուցման ձեռնարկի տպագրություն երեխաների համար՝ 4,582,500 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:


3. «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական եկամուտների կոմիտե:



Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

“Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ” միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Աիդա Առաքելյան



15 հուլիսի 2013թ.

9 տարեկան երեխաների համար նախատեսված քրիստոնեական ուսուցման ձեռնարկի տպագրություն


Օ Ր Ա Գ Ի Ր

1. Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է նպաստել հայ մանուկների քրիստոնեական ուսուցմանն ու դաստիարակությանը՝ Հայ առաքելական սուրբ եկեղեցու կիրակնօրյա դպրոցները 9 տարեկան երեխաների համար նախատեսված քրիստոնեական ուսուցման ձեռնարկով ապահովելու միջոցով:
2. Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության՝ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից
3. Բարեգործը	“Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ” միջազգային բարեգործական կազմակերպության ԱՄՆ գրասենյակ, հասցեն՝ 34834, Վեերհուզեր, Վեյ Մաուր, Ֆեդերալ Վեյ, ՎԱ 98001, ԱՄՆ, հեռ. 1-888-511-6548
4. Ծրագրի կատարողը	«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Ռ. Մելիքյան փող., թիվ 1, ՀՎՀՀ՝ 02528755
5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Իրականացման վայրը՝ ՀՀ, քաղաք Երևան Բնագավառը՝ սոցիալական-հոգևոր
6. Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 4,582,500 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ)
7. Բարեգործություն ստացողը	Բարեգործություն ստացողներն են հանդիսանում Հայ առաքելական սուրբ եկեղեցու կիրակնօրյա դպրոցների աշակերտները

2

8. Ծրագրի իրականացման տևողությունը	23 հուլիսի 2013թ. – 20 սեպտեմբերի 2013թ.		
9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Միջոցառումների նկարագրությունը	Ժամկետները	անհրաժեշտ ֆինանս. միջոցներ
	9 տարեկան երեխաների համար նախատեսված «Մեր հավատամքը» Քրիստոնեական ուսուցման ձեռնարկի տպագրություն	23 հուլիսի 2013թ. – 20 սեպտեմբերի 2013թ.	4,582,500 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ-ի)
10. Ձեռք բերվող (ներմուծվող) ասպրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	9 տարեկան երեխաների համար նախատեսված քրիստոնեական ուսուցման ձեռնարկի տպագրության աշխատանքներն իրականացվելու են «Անտարես» ՍՊԸ-ի կողմից: 9 տարեկան երեխաների համար նախատեսված քրիստոնեական ուսուցման ձեռնարկի տպագրության համար նախատեսված է 4,582,500 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ-ի):		
11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:		
12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	“Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ” միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղն այս ծրագիրն իրականացնելու է Հայ առաքելական սուրբ եկեղեցու Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի հետ համագործակցությամբ:		
13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունը կիրականացվի “Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ” հայաստանյան մասնաճյուղի ազգային գրասենյակի և վերջինիս՝ Քրիստոնեական նվիրվածության բաժնի կողմից: “Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ” միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև ՀՀ հարկային մարմինների կողմից: Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:		

“Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ” միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Գործառնությունների ղեկավար Շադիկ Մարուխյան



10/1



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**9 օգոստոսի 2013 թվականի N Մ - 684 -Ա
քաղ. երևան**

**«ՎՈՐՈՂ ՎԻԺՆ ԻՆՅԵՐՆԵՅՇԵԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱԾՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ
ՄԱՐԶԻ ԱՐՏԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԻՐԱԿԼՕՐՅԱ ԴՊՐՈՑԻ
ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 3/3.8-1/10754-13, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի հուլիսի 29-ի N 02/4372-13, Հայաստանի կրթության և գիտության նախարարության 2013 թվականի հուլիսի 29-ի N 03/07/8472-13, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հուլիսի 30-ի N ՎՄ/3-4/8953-13 և Արագածոտնի մարզպետարանի 2013 թվականի հուլիսի 24-ի N 01/14.2/2194-13 եզրակացությունները, որոշում է.

1.	Ծրագրի նպատակը	Տաշիրի նոր մանկապարտեզի մասնաշենքի կառուցման աշխատանքները՝ հաշվի առնելով ներկայումս գործող մանկապարտեզի շենքի հետագա շահագործման անհնարիությունը:
2.	Ծրագրի նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել 22 հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«Տաշիր» բարեգործական հիմնադրամ (քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ 07203481)
4.	Ծրագրի կատարողը	«Տաշիր» բարեգործական հիմնադրամ (քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ 07203481)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	22, Լոռու մարզ, քաղ. Տաշիր, կրթության բնագավառ:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է 653,000,000 դրամ:
7.	Բարեգործությունն ստացողը	Տաշիրի քաղաքային համայնքը՝ շունությունն անհատույց հանձնվելու է համայնքին:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2013 թվականի հուլիս – 2014 թվականի օգոստոս

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	<ol style="list-style-type: none"> 1. հողային աշխատանքներ (մինչև 2013 թվականի օգոստոսի 30-ը) - 3,000,000 դրամ, 2. երկաթբետոնե հիմնակմախքի կառուցում (մինչև 2013 թվականի հոկտեմբերի 30-ը) - 300,000,000 դրամ՝ այդ թվում. - բետոն – 2200 մ³, 92,400,000 դրամ, - ամրան – 186 տոննա, 81,840,000 դրամ, - տախտակ – 40 մ³, 6,200,000 դրամ, 3. ինժեներական ենթակառուցվածքների կառուցում (մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը) - 120,000,000 դրամ, 4. տանիքի ջրամեկուսացում՝ (մինչև 2013 թվականի նոյեմբերի 30-ը) - 36,000,000 դրամ, 5. արտաքին երեսպատման և ներքին հարդարման աշխատանքներ՝ (մինչև 2014 թվականի հուլիսի 30-ը) – 150,000,000 դրամ, 6. տարածքի բարեկարգում և կառուցապատման այլ աշխատանքներ՝ (մինչև 2014 թվականի հուլիսի 30-ը) – 30,000,000 դրամ, 7. նախագծային ծախսեր – 7,000,000 դրամ, 8. կազմակերպչական ծախսեր – 7,000,000 դրամ
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ակնկալվում է շինարարական նյութերի, սարքավորումների և այլ ապրանքների ներմուծման և 22 տարածքում ձեռքբերված դիմաց հարկային արտոնություններ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Նախատեսվող կազմակերպչական ծախսերը կկազմեն 7.000.000 դրամ՝ այդ թվում բեռները Երևանից Տաշիր ավտոտրանսպորտային միջոցներով տեղափոխելու ծախսերը :
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Լոռու մարզպետարան, Տաշիրի քաղաքապետարան
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	22 օրենքով սահմանված կարգով՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև տեղեկատվություն կներկայացվի 22 կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ծրագրի ընթացքի և ավարտի վերաբերյալ:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 օգոստոսի 2013 թվականի N Մ-720-Ա
(Որոշումն ընդունվել է 2013 թվականի օգոստոսի 9-ին)
քաղ. երևան**

**«ԴԻԱԿՈՆԻԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑ-
ՎՈՂ «ՃԱՄԲԱՐԱՅԻՆ ՀԱՆԳՍՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի օգոստոսի 9-ի N 3/3.8-1/11627-1, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2013 թվականի օգոստոսի 13-ի N 02/4732-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի օգոստոսի 8-ի N ՖԲ/ԱՆՄ-3/5978-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի օգոստոսի 9-ի N ՎՄ/3-4/9449-13 եզրակացությունները,
ո Ր Ո Շ ՈՒ Մ է:


1. Բարեգործական որակել «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. երևան, Աշտարակի խճուղի, «Հոյսի ավան» թաղամաս, ՀՎՀՀ՝ 00068196) իրականացվող՝ 5,100,000 դրամ ընդհանուր արժեքով «Ճամբարային հանգստի կազմակերպում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գուգարք ճամբար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06921742) 2013 թվականի օգոստոսի 5-ին կնքված՝ N 03/13 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է երեխաների ճամբարային հանգստի կազմակերպման ծառայությունների մատուցում՝ 5,100,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Դիակոնիա բարեգործական հիմնադրամի

(տնօրեն Բ. Ջամբազյանի կողմից)

«05»-ը օգոստոսի 2013թ.

«Ճամբարային հանգստի կազմակերպում»

Ծ Ր Ա Գ Ի Ր

1.	Ծրագրի նպատակը	Թվով 102 սոցիալապես անապահով երեխաների ճամբարային հանգստի կազմակերպում
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից
3.	Բարեգործը	Հոլանդիայի «Մենսենկինդերեն» բարեգործական հիմնադրամ (հասցե՝ Նիդերլանդներ, ք. Հարդերվայք 3842 DR, Օուստայնդե 23)
4.	Ծրագիրը կատարողը	Հայաստանի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, ք. Երևան, Աշտարակի խճուղի, «Հուլյսի ավան» քաղամաս ԳՎՀԳ 00068196)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Վահագնաձոր գյուղի «Գուգարք» մանկական ճամբար Սոցիալական բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	5100000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Թվով 102 սոցիալապես անապահով երեխաներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2013թ. օգոստոսի 10-ից մինչև 2013թ.-ի օգոստոսի 30-ը


Ժ. 10/2

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	2013թ. օգոստոսի 10-ից մինչև 2013թ. օգոստոսի 30-ը ընկած ժամանակահատվածում Լոռու մարզ, Վահագնաձոր գյուղի «Գուգարք» մանկական ճամբարում թվով 102 սոցիալապես անապահով երեխաների ճամբարային հանգստի կազմակերպում՝ 5100000 դրամ ընդհանուր արժողությամբ
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի և «Գուգարք ճամբար» ՍՊԸ-ի միջև կնքվել է թվով 102 սոցիալապես անապահով երեխաների ճամբարային հանգստի կազմակերպման մասին պայմանագիր, որի արժեքը կազմում է 5100000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարություն և Լոռու մարզի մարզպետարան
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հաշվետվությունների ներկայացում «Մենսենկինդերեն» բարեգործական հիմնադրամին Օրենքով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում Հայաստանի Հանրապետության Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին

Կազմեց՝ «Դիակոնիա» թ/հ-ի փոխտնօրեն Վ. Ավագյան
(անուն, ազգանուն, պաշտոն, ստորագրություն)

(Ստորագրություն)

Ժ. 10/2



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 օգոստոսի 2013 թվականի N Մ-721-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱ-
ՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2013 թվականի օգոստոսի 1-ի N 3/3.8-2/11211-13 և Հայաստանի Հանրապետության կառա-
վարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի օգոստոսի 6-ի N ՎՄ/3-
4/9308-13 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հաս-
ցեով «Axios» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ օնկոլոգիական հիվանդություններով տառապող հիվանդներին դեղորայքի տրամադրման միջազգային ծրագրի շրջանակներում ստացված 768 տուփ «Գլիվեկ HGC 100 մգ N 120» դեղի (մեկ տեղ, 92 կգ ընդհանուր քաշով, 2,918,400 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողու-
թյամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծման և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Պրոֆեսոր Ռ. Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանն անհատույց հատկացման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդա-
սիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի հանձնումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրա-
պետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**9 օգոստոսի 2013 թվականի N Մ-722-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱԿԱԿՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ
ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՅՎԱԾ
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի օգոստոսի 1-ի N 3/3.8-2/11180-13, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի օգոստոսի 6-ի N ԴԴ/22/8770-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի օգոստոսի 6-ի N ՎՄ/3-4/9274-13 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել Առողջապահության համաշխարհային կազմակերպության (WHO) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված ախտորոշիչ թեստերի (մեկ տեղ, 5.8 կգ ընդհանուր քաշով, 1,659 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 109.5 ԱՄՆ-ի դոլար, «Չվարթոնց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱՐԱՐ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**9 օգոստոսի 2013 թվականի N Մ-723-Ա
քաղ. երևան**

**«ՍԱՐԴԱՐԱԿԱՏ» ՔԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒ
ԹՅԱՆ ՀԱՍՑԵՆՎ ԱՏԱՅՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի օգոստոսի 6-ի N 3/3.8-2/11515-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի օգոստոսի 5-ի N ՖԲ/ԱնՄ-3/5856-12, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարության 2013 թվականի օգոստոսի 5-ի N 04/07/1621-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի օգոստոսի 7-ի N ՎԱ/3-4/9345-12 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից, որպես օժանդակություն, «Սարդարապատ» բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված բերի (148 տեղ, 5,611 կգ ընդհանուր քաշով, 70,041 ԱՄՆ-ի դոլարի համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 6,305 ԱՄՆ-ի դոլար, բերի բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. «Սարդարապատ» բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ նշված բերի համապատասխան ձևակերպումներն ու բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին և Հայաստանի Հանրապետության Այլուրի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ




Ս Տ Գ Մ Մ Ո Ւ Յ Ա Ն

dr. 10/73

«Սարդարապատ» բարեգործական հասարակական կազմակերպություն հասցեով ստացված բերի բաշխման ցանկ

Անվանում	Քանակ	Ստացման վայր (ԱՄՆ-ի դոլար)	Մարզ	Համայնքի կառուցի անվանումը	Շահառուներ	Քանակը ըստ համայնքների
Մանկական հագուստ	92 արկղ	45981	Սյունիք	«Սիրիահայերի հիմնախմբիները համակարգող» կենտրոն» ՀԿ	85 անապահով ընտանիք	62 արկղ
			Երևան	«Նունե Շապյան» Բարեգործական ՀԿ	25 անապահով ընտանիք	10 արկղ
Մանկական կրշիկ՝ նոր	10 արկղ	4580	Երևան	«Նունե Շապյան» Բարեգործական ՀԿ	Երևանի թիվ 63 դպրոց (թիվ 60 աշակերտներ)	12 արկղ
			Երևան	Աջափնյակ վարչական շրջան	19 անապահով ընտանիք	8 արկղ
Տղամարդու հագուստ	13 արկղ	6510	Սյունիք	«Սիրիահայերի հիմնախմբիները համակարգող» կենտրոն» ՀԿ	19 անապահով ընտանիք	7 արկղ
			Երևան	«Սիրիահայերի հիմնախմբիները համակարգող» կենտրոն» ՀԿ	9 անապահով ընտանիք	2 արկղ
Կանացի հագուստ	8 արկղ	3800	Սյունիք	«Սիրիահայերի հիմնախմբիները համակարգող» կենտրոն» ՀԿ	7 անապահով ընտանիք	1 արկղ
			Երևան	Աջափնյակ վարչական շրջան	24 անապահով ընտանիք	8 արկղ
			Երևան	Աջափնյակ վարչական շրջան	17 անապահով ընտանիք	3 արկղ
			Երևան	«Սիրիահայերի հիմնախմբիները համակարգող» կենտրոն» ՀԿ	9 անապահով ընտանիք	2 արկղ
			Սյունիք	«Սիրիահայերի հիմնախմբիները համակարգող» կենտրոն» ՀԿ	17 անապահով ընտանիք	4 արկղ
			Երևան	Աջափնյակ վարչական շրջան	14 անապահով ընտանիք	3 արկղ
			Երևան	«Սիրիահայերի հիմնախմբիները համակարգող» կենտրոն» ՀԿ	7 անապահով ընտանիք	1 արկղ

Գրքեր (Ուսումնական դասագրքեր, հասարակական գիտություններ)	3 արկղ	310	Երևան	Մեղրի	Թիվ 1 միջնակարգ դպրոց	2 արկղ
			Երևան	«Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող» կենտրոն» ՀԿ	«Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող» կենտրոն» ՀԿ	1 արկղ
Թղթյա տակդիր (հիվանդանոցային)	3 արկղ	950	Երևան	Երևան	«Շենգավիթ» բժշկական կենտրոն	3 արկղ
Շամպուն	1 արկղ	525	Սյունիք	Մեղրի	17 անապահով ընտանիք	1 արկղ
Հագուստի արտահանիչ (հեղուկ)	1 հատ	30	Սյունիք	Մեղրի	1 անապահով ընտանիք	1 հատ
Շոկոլադ	10 արկղ	4585	Սյունիք	Մեղրի	160 անապահով ընտանիք	6 արկղ
			Երևան	Աջափնյակ վարչական շրջան	70 անապահով ընտանիք	2 արկղ
			Երևան	«Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող» կենտրոն» ՀԿ	70 անապահով ընտանիք	2 արկղ
Մաստակ	2 արկղ	975	Սյունիք	Մեղրի	180 անապահով ընտանիք	2 արկղ
Փայտյա մահճակալ՝ 2 տեղանոց	1 հատ	700	Սյունիք	Մեղրի	1 անապահով ընտանիք	1 հատ
Ներքնակ	1 հատ	280	Երևան	Երևան	«Շենգավիթ» բժշկական կենտրոն	1 հատ
Բազմաֆունկցիոնալ սարք (տպող, պատճենահանող սարք)	1 հատ	545	Երևան	Սարգարապատ Բարեգործական Հասարակական Կազմակերպություն	Սարգարապատ Բարեգործական Հասարակական Կազմակերպություն	1 հատ
Փայտյա պահարան՝ 2 դռանի	1 հատ	200	Սյունիք	Մեղրի	1 անապահով ընտանիք	1 հատ
Փայտյա աթոռներ	1 հատ (5 հատ)	70	Սյունիք	Մեղրի	1 անապահով ընտանիք	1 հատ

Տեղրի քանակը՝ 148, ընդհանուր քաշը՝ 5611 կգ, 70.041 ԱՄՆ դոլար արժեքով, ճանապարհածախը կազմել է 6305 ԱՄՆ դոլար:
 «Սարգարապատ» Բարեգործական Հասարակական Կազմակերպություն
 Նախագահ  Ն. Եղիազարյան

Ձև 10/14.3



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

9 օգոստոսի 2013 թվականի N Մ-724-Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 19-Ի N Մ-176-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-
ՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-
թյան 2013 թվականի օգոստոսի 6-ի N 3/3.8-2/11514-13 և Հայաստանի Հանրապետության կառա-
վարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի օգոստոսի 6-ի N ՎՄ/3-
4/9309-13 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնա-
ճյուղի կողմից ձեռք բերված մարդատար վերելակը (14 տեղ, 4,452 կգ ընդհանուր քաշով,
33,300 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,200
եվրո դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառա-
վարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի
մարտի 19-ի «Հրայր և Աննա Հովնանյան ֆաունդեյշն» կորպորացիայի մասնաճյուղի կողմից
իրականացվող ծրագրի մասին» N Մ-176-Ա որոշմամբ (2012 թվականի նոյեմբերի 30-ի
N Մ-946-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն և Հայաստանի
Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Շ Մ Ա Մ

**9 օգոստոսի 2013 թվականի N Մ-725-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-941-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԾՐԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի օգոստոսի 2-ի N 3/3.8-2/11271-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի օգոստոսի 2-ի N ՖԲ/ԱՆՄ-3/5784-13 ու Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի օգոստոսի 6-ի N ՎՄ/3-4/9276-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ Մ Ա Մ** է:

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված բրինձը (400 տեղ, 20,024 կգ ընդհանուր քաշով, 32,800 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,400 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է «Արարտյան» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-941-Ա որոշմամբ (2011 թվականի հունիսի 6-ի N Մ-353-Ա, 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-853-Ա, 2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-088-Ա և 2013 թվականի փետրվարի 15-ի N Մ-098-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի, Երևանի քաղաքապետարանի և Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի և Տավուշի մարզպետարաններ:


ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Բեռի բաշխման ցանկ

Ինվ. 04096 09.07.2013

N N	Ապրանքի անվանումը	Չափի միավոր	Քանակը	Շահառուները ըստ մարզերի	Շահառուների քանակը	Կրճեք ըստ փաթեթերի (ԱՄՆ-ի դոլար)
1	Բրինձ	կգ	20000	Գեղարքունիքի մարզ	Գեղիկ 74 Այգուտ 164 Մարտունի 73 Դավաթակ 81 Վանան 188 Կալվան 23 Բարեպատ 6 Չորավանք 31 Անտարանեջ 22 Չավար 61 Թթուցուր 81 Արտաշատ 51	652 1,445 643 714 1,656 203 53 273 194 537 714 449
				Արմավիրի մարզ	Վերդի 17	150
				Կրարատի մարզ	Արտաշատ 16 Գետազատ 39 Մրգանոշ 16	141 344 141
				Կոտայքի մարզ	Չարենցավան 13 Սյաթրի 41 Չորադրուր 18 Արտաշատ 38	115 361 159 355
				Լոռու մարզ	Վանանոշ 48	423
				Տավուշի մարզ	Դիլիջան 15 Իջևան 18	132 159
				Երևան	3201 4335	28,204 38,200



«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմնորոշում

20.10.13



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**9 օգոստոսի 2013 թվականի N Մ-726-Ա
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-
ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի օգոստոսի 6-ի N 3/3.8-2/11512-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի օգոստոսի 7-ի N ՎՄ/3-4/9343-12 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից ձեռք բերված ապրանքները (փրփրապլաստ, բիտումային քսուկ, տանիքի բիտումային հիդրոմեկուսիչ նյութ, պոլիուրետանային ջրամեկուսիչ խառնուրդ, 38 տեղ, 16,320 կգ ընդհանուր քաշով, 23,601.4 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,285 եվրո, «ՄՃՓ» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա և սեպտեմբերի 28-ի N Մ-766-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
09 օգոստոսի 2013 թվականի N Մ- 727-Ա
քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ-Ի
ՀԱՍՑԵՆՎ ԱՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հուլիսի 30-ի N 3/3.8-2/11011-13, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2013 թվականի հուլիսի 29-ի N 03/07/8464-13, Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հուլիսի 31-ի N ՎՄ/3-4/9073-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**


1. Բարեգործական որակել «Լոյս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամի կողմից հատկացված գումարներով գնված՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռների՝

- 1) ուսումնական սարքեր (1տեղ, 17lbs (~7.7 կգ) ընդհանուր քաշով, 11,690 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ ՄՏ»).
- 2) ռադիոտեխնիկական սարքեր (1տեղ, 4.8 կգ ընդհանուր քաշով, 5,550.1 եվրո ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ ՄՏ»).
- 3) (ռադիոտեխնիկական սարքեր (1 տեղ, 62 կգ ընդհանուր քաշով, 9,406.20 եվրո ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» Մ/Տ).
- 4) ուսումնական սարքեր (1 տեղ, 11.5 կգ ընդհանուր քաշով, 14,829.11 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ ՄՏ»).
- 5) (ուսումնագիտական մագնիտոմետր (1 տեղ, 76 Lbs (~34.47 կգ) ընդհանուր քաշով, 18,762.5 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 581 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ ՄՏ»).
- 6) (ուսումնագիտական «Polartronic H532» պոլյարիմետր՝ իր բաղադրամասերով (1 տեղ, 33.5 կգ ընդհանուր քաշով, 22,752 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով,

փոխադրման և այլ ծախսերը կազմել են 310 եվրո, «Զվարթնոց» Մ/Տ) ներմուծման ծրագրերը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռների համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



ԱՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
09 օգոստոսի 2013 թվականի N Մ- 728 -Ա
քաղ. Երևան

ԱՄՆ-Ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ» («ՀԱՅՐԵՆԻՔ» ՄԻՈՒԹՅՈՒՆ)
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՆԱԾՅՈՒՂԻ ՀԱՍՑԵՈՎ
ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հուլիսի 30-ի N 3/3.8-2/11021-13, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2013 թվականի հուլիսի 29-ի N 2Բ/ԱՆՄ-3/5617-13, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2013 թվականի հուլիսի 30-ի N 03/07/8512-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013 թվականի հուլիսի 31-ի N ՎՄ/3-4/9069-13, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2013 թվականի հուլիսի 26-ի N 101/104.3.2/3813-13 ու Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2013 թվականի հուլիսի 29-ի N 01/4657-13 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Բարեգործական որակելի ԱՄՆ-ի «Հայաստանի բարեկամներ» («Հայրենիք» միություն) կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի (ՀՀ, քաղ. Երևան, Խորենացի 9, բն.14, ՀՎՀՀ՝ 00091195) կողմից իրականացվող՝ 72,129 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով (փոխադրման ծասերը՝ 7,675 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ) «ԱՄՆ-ի «Հայաստանի բարեկամներ» («Հայրենիք» միություն) կազմակերպության կողմից տրամադրված մարդասիրական օգնության բաշխում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ ԱՄՆ-ի «Հայաստանի բարեկամներ» («Հայրենիք» միություն) կազմակերպության կողմից ԱՄՆ-ի «Հայաստանի բարեկամներ» («Հայրենիք» միություն) կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (735 տեղ, 10,197 կգ ընդհանուր քաշով, 72,129 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով (փոխադրման ծախսերը՝ 7,675 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ), «Արարտյան» Տ/Մ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. ԱՄՆ-ի «Հայաստանի բարեկամներ» («Հայրենիք» միություն) մարդասիրական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամ-

կետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Լոռու ու Սյունիքի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատված է

«Հայաստանի բարեկամներ» (Հայրենիք Միություն) կազմակերպության նախագահ Գ.Բաշմակյանի կողմից 21.07.2013թ



«Հայաստանի բարեկամներ» (Հայրենիք Միություն) կազմակերպության կողմից տրամադրված մարդասիրական օգնության բաշխման ծրագիր

ՕՐԱԳԻՐ

1	Ծրագրի նպատակը	1. Հայրենիք Միության կազմակերպության օգնության բաշխում ԳՀ-ի Կիրովականի «Ծիծեռնակ» ճամբարի, ԵՊՀ-ի, Սիսիանի Հիդրոշինարարների այգու, Լոռու մարզի Թումանյան գյուղի դպրոցի, ԼՂՀ-ի Քաշաթաղի շրջանում բնակվող սիրիահայերի, ԼՂՀ-ի Արալեռի զինվորական հոսպիտալի կարիքավոր շահառուներին:
2	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	2. Օգտվել մաքսային օրենքով սահմանված արտոնություններից:
3	Բարեգործը	3. ԱՄՆ-ի «Հայաստանի բարեկամներ» (Հայրենիք Միություն) կազմակերպություն Ամերիկայում՝ P.O. Box 1149 Montebello, CA 90640 USA. հեռ. 626-487-0740:
4	Ծրագիրը կատարողը	4. ԱՄՆ-ի «Հայաստանի բարեկամներ» (Հայրենիք Միություն) կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ, ԳՎՀՀ-Ն՝ 00091195, պետ. գրանցման վկայական՝ 01Բ 001570, գործունեության հասցե՝ Խորենացի 9 բն.14, հեռ. 587074, 091-424180:
5	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	5. ԳՀ –ի Կիրովականի «Ծիծեռնակ» ճամբար-սոցիալական, ԵՊՀ-ուսումնական, Սիսիանի «Սյունիք Ձարգացման Ինստիտուտ» (ՊՈԱԿ) սոցիալական, Լոռու Թումանյան գյուղ-սոցիալական, ԼՂՀ-ի Քաշաթաղի շրջանի և Արալեռի տարածք:

6	Ծրագրի բյուջեն	6. Բեռի փոխադրման արժեքը՝ 29.717.148 դրամ և բեռի փոխադրման արժեքը՝ 3.162.000 դրամ:
7	Բարեգործություն ստացողը	7. Չուգարաց թեմի առաջնորդարան, Սիսիանի «Սյունիք Ձարգացման Ինստիտուտ» կազմակերպություն (ՊՈԱԿ) ԵՊՀ-ի ֆիզիկայի ֆակուլտետ, Լոռու մարզի Թումանյան գյուղի գուղապետարան, ԼՂՀ-ի Քաշաթաղի մարզպետարան, ԼՂՀ-ի Արալեռ տարածքի հոսպիտալ:
8	Ծրագրի իրականացման տևողությունը	8. 01.08.2013թ. մինչև 31.12.2013թ
9	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	9. Չորսամսյա ժամկետում կբաշխվի ապրանքը Կիրովականի «Ծիծեռնակ» ճամբարին՝ 15.414.980 դրամ արժողությամբ, Սիսիանի «Սյունիք Ձարգ. Ինստ.» (ՊՈԱԿ)՝ 838.420 դրամ, Լոռու մարզի Թումանյան գյուղ՝ 1.030.000 դրամ, ԵՊՀ՝ 688.040 դրամ, ԼՂՀ-ի Քաշաթաղի շրջան՝ 8.460.008 դրամ և ԼՂՀ-ի Արալեռի շրջանի հոսպիտալ՝ 3.285.700 դրամ
10	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գները	10. Կից ներկայացվում է ներմուծվող ապրանքի ընդհանուր արժողության, տարողության, բաշխման ցուցակ:
11	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր չկան:
12	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	12. ԳՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով, ԳՀ Սոցապ. կրթության և գիտության նախարարություններ, Սյունիքի և Լոռու մարզպետարաններ, ԼՂՀ-ի տեղական ինքնակառավարման մարմիններ:
13	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	13. ԳՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ հաշվետվությունների տեսքով, «Հայրենիք Միության» գերագույն խորհուրդ:

«Հայաստանի բարեկամներ» (Հայրենիք Միություն) կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության լիազոր ներկայացուցիչ՝



[Handwritten signature] Լուսինե Վ. Ազոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՅՑԱԼ ԿԱՊԻՏԱԼԻ ՓՈԽԱՐՈՄԱՆ ԶՆԱՌՈՂՈՋ

էջ 1

Նվիրատու

Հայաստանի ընկերներ («Հայրենիք» ՍՊԸ)

Հասցե

629, փողոց 1

Հեռ.

626-487-0740

Փոստային հասցե 1149

Ֆաքս

323-721-6204

Մոնտեբելյո, Կալիֆորնիա 90640

Գ/Գ	հատված համար	Բովանդակություն	Կշիռ (lbs.)	Երկար. երկ	Լայն. L	Բարձր. P	Office Use only	Արժեք \$	ստացող
1	280	Շինարարական տախտակ	6620	240	60	30		3649	Քաշաթաղ
2	80	Շինարարական նրբատախտակ	3040	96	48	40		2800	Քաշաթաղ
3	80	Շինարարական զիպսակարդոն	4000	96	48	40		2000	Քաշաթաղ
4	30	Դուռ	240	80	36	30		1000	Քաշաթաղ
5	12	Տանիքաձածկված թուղթ	600	48	40	30		600	Քաշաթաղ
6	15	Ներկ	675	80	10	48		1500	Քաշաթաղ
7	2	Պոլիէթիլենային ծածկոց	90	20	10	36		220	Քաշաթաղ
8	4	Գաջ և ժամավեն	132	24	12	24		290	Քաշաթաղ
9	10	Էլեկտրական մետաղալարեր	150	60	12	6		1200	Քաշաթաղ
10	4	Պտուտակներ և մեխեր	160	24	24	16		775	Քաշաթաղ
11	10	Շրիշակ	200	72	24	1		1000	Քաշաթաղ
12	1	Ծխնի (պետլիա) և կողպեք	42	24	12	12		400	Քաշաթաղ
13	4	Ձեռքի գործիքներ	150	24	24	20		1330	Սիսիանի հիդրոշին.այգի(ՊՈԱԿ)
14	1	Ալյումինե սանդուղք	8	72	30	8		80	Սիսիանի հիդրոշին.այգի(ՊՈԱԿ)
15	1	Պլաստիկ անոթ	300	0	0	0		800	Քաշաթաղ

Ընդամենը

էջ 1 ընդամենը

16407

0

\$

17644



Գ/Գ	հատված համար	Բովանդակություն	Կշիռ (lbs.)	Երկար. եր	Լայն. L	Բարձր. P	Office Use only	Արժեք \$	Ստացողը
16	10	Հիվանդանոցի պարագաներ	300	80	60	12		3000	Արալեո հոսպիտալ
17	10	Տակդիրներ/կիսավարտիքներ	140	80	60	12		2200	Արալեո հոսպիտալ
18	5	Հիվանդանոցի ասրքավորումներ	365	48	24	24		2775	Արալեո հոսպիտալ
19	28	Հագուստ	944	80	40	60		8300	«Օիժենակ» ճամբար, Քաշաթաղ, Թումանյան գյուղ
20	5	Վերմակներ/սավաններ	170	40	40	20		1470	«Օիժենակ» ճամբար
21	3	Ուսուցարկեր	96	40	20	20		1440	«Օիժենակ» ճամբար
22	35	Մետաղե երկհարկանի մահճակալ	1750	96	94	90		14000	«Օիժենակ» ճամբար
23	70	Ներքնակ	700	120	94	90		14000	«Օիժենակ» ճամբար
24	10	Աթոռ	80	24	24	24		250	«Օիժենակ» ճամբար
25	4	Թղթերի պահարան	280	96	24	60		800	«Օիժենակ» ճամբար
26	1	Փայտե երկհարկանի մահճակալ	65	84	36	10		630	«Օիժենակ» ճամբար
27	2	Ներքնակի հավաքածու	20	84	36	16		245	«Օիժենակ» ճամբար
28	5	Պահարան	650	84	36	72		1500	Քաշաթաղ
29	3	Սեղան	180	72	60	24		600	«Օիժենակ» ճամբար
30	4	Խոհանոցի և նստուցման պարագաներ	120	40	20	20		980	«Օիժենակ» ճամբար
31	1	Շղթայե սղոց	20	12	12	6		250	Սիսիանի հիդրոշին. Այգի(ՊՈԱԿ)
32	1	Խոտ հեծելու մեքենա	100	48	36	12		375	Սիսիանի հիդրոշին. Այգի(ՊՈԱԿ)
33	4	Համակարգիչ և տպիչ	93	40	40	20		1670	

էջ 2 ընդամենը

6073

0

\$


54485

Ընդհանուրը (1 և 2 էջեր)

22480

72129

ապրանքների/ստացականների, բովանդակությունը դասակարգող տողերի և արժեքների պատճենները պետք է այս տեսքն ունենան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 օգոստոսի 2013 թվականի N Մ- 729 -Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 13-Ի N Մ-278-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-
ՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («Հայկական ակնաբուժության
նախագիծ» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 3/3.8-2/10834-13, Հայաստանի
Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2013
թվականի հուլիսի 30-ի N ՎՄ/3-4/8954-13 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Հայկական ակնաբուժության նախագիծ» կորպորացիայի կողմից
ուղարկված՝ «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի հաս-
ցեով ԱՄՆ-ից ստացված բեռը (ակնաբուժական սարքի մասեր՝ 1 տեղ, 2.8 կգ,
1,921 եվրոյին համարժեք դրամ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ»ՄՏ)
ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրե-
րի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի ապրիլի 13-ի «Հայկական ակնա-
բուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Լույս՝ հայի
աչքերին» (վեցերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-278-Ա որոշմամբ հաստատված ծրագրի
շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն,
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների
կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Մ Ա Մ



09 օգոստոսի 2013 թվականի N Մ- 730Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 15-Ի N Մ-159-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-
ՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (Ֆրանսիայի «Բժիշկներ՝
առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2013 թվականի հուլիսի 19-ի N 3/3.8-2/10335-13, Հայաստանի
Հանրապետության առողջապահության նախարարության 2013 թվականի հուլիսի 19-ի
N ԴԴ/22/8101-13, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետա-
կան եկամուտների կոմիտեի 2013 թվականի հուլիսի 23-ի N ՎՄ/3-4/8712-13 եզրակացու-
թյունները, **ո Ր Ո Շ Մ Ա** է.

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից
ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մաս-
նաճյուղի հասցեով Բելգիայից ստացված բեռը (դեղորայք՝ TMC207 100 մգ, 2 արկղ, 4.2 կգ
ընդհանուր քաշով, 1,960 եվրո արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 118.94 եվրո,
«ՄՓ և ՍԱՓԱՄ ՄՏ») ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բա-
րեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մարտի 15-ի
«Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի
կողմից իրականացվող «Տուբերկուլոզի և դեղորայքակայուն տուբերկուլոզի վերահսկման
ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին»
N Մ-159-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-
րարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն,
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների
կոմիտե:


ՆԱԽԱԳԱԸ 

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 օգոստոսի 2013 թվականի N Մ- 739 -Ա
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ- 1074-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի
Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային
ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 3/3.8-2/10846-13, Հայաստանի Հան-
րապետության առողջապահության նախարարության 2013 թվականի հուլիսի 26-ի N ԴԴ/
22/8369-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտեի 2013 թվականի հուլիսի 26-ի N ՎՄ/3-4/8881-13 եզրակացությունները,
ո Ր Ո Շ ՈՒ Մ է.

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարա-
րության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկույոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի
միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված Հայաստանի Հան-
րապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հան-
րապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Գլոբալ
ֆոնդի կողմից ստացված բեռը (դեղորայք՝ 2 տեղ, 254 կգ քաշով, 65,420.8 ԱՄՆ-ի դոլարին
համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծ-
վում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետու-
թյունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային
ծրագրի մասին» N Մ-1074-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաս-
տանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 օգոստոսի 2013 թվականի N Մ- 732 -Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ- 1074-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի
Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային
ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր) (1)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2013 թվականի հուլիսի 30-ի N 3/3.8-2/11009-13, Հայաստանի Հան-
րապետության առողջապահության նախարարության 2013 թվականի հուլիսի 29-ի N ԴԴ/22/
8416-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտեի 2013 թվականի հուլիսի 31-ի N ՎՄ/3-4/9067-13 եզրակացությունները,
որոշում է.

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարա-
րության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի
միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված Հայաստանի Հան-
րապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հան-
րապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Գլոբալ
ֆոնդի կողմից ստացված բեռը (դեղորայք՝ 2 տեղ, 6 կգ քաշով, 755,36 ԱՄՆ-ի դոլարին
համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Չվարթնոց» ՄՏ) ներմուծ-
վում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովի 2012 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետու-
թյունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային
ծրագրի մասին» N Մ-1074-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաս-
տանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 օգոստոսի 2013 թվականի N Մ- 733 -Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-
ՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ

(«Հայաստանի Հանրապետությունում տուրերկույրոգի դեմ պայքարի
ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուրերկույրոգի
կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագիր)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի հա-
մակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանս-
ների նախարարության 2013 թվականի հուլիսի 30-ի N 3/3.8-2/11020-13 Հայաստանի Հան-
րապետության առողջապահության նախարարության 2013 թվականի հուլիսի 29-ի N ԴԴ/22/
8418-13 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկա-
մուտների կոմիտեի 2013 թվականի հուլիսի 31-ի N ՎՄ/3-4/9065-13 եզրակացությունները,
որոշում է.

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարու-
թյան և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուրերկույրոգի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի
միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետու-
թյան առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետա-
կան կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Գլոբալ ֆոնդի
կողմից ստացված բեռը (ներարկիչներ և օգտագործված ներարկիչների, ասեղների տուփեր՝
6 տեղ, 56 կգ ընդհանուր քաշով, 212,75 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝
փոխադրման ծախսերը կազմել են 22,920 հնդկական ռուպի, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում
է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետու-
թյունում տուրերկույրոգի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն
տուրերկույրոգի կառավարման ընդլայնում» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-068-Ա
որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-
րություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաս-
տանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
09 օգոստոսի 2013 թվականի N Մ- 734- Ա
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ
31-Ի N Մ-068-Ա ԵՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-1074-Ա ՈՐՈ-
ՇՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ
(«Առողջապահական համակարգի հզորացում և դեղակայուն տուբերկույրի
կառավարման ընդլայնում», «Հայաստանի Հանրապետությունում
ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն»)


Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապա-
հության նախարարության 2013 թվականի հուլիսի 16-ի N ՄՀ/15-1/7934-13 գրությունը,
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2013 թվականի հուլիսի
23-ի N 3/3.8-1/10614-13 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պե-
